ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԳՐԻԳՈՐ ՇԵՆՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ - Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՁԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՇԷՆԵԱՆ, ՈՐ Ի ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ

ԱՄՆ հայոց Արեւմտեան թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէր-պէրեանից տեղեկացանք, որ այս տարի լրանում է Ձեր գրական եւ հասարակական գործունէութեան 50-րդ տարեդարձը: Այս առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Մեծարգոյ պրն Շէնեան, ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ քաջատեղեակ ենք ազնիւ հայորդուդ եկեղեցասէր ու ազգանուէր ոգուն եւ Սուրբ Էջմիածնի հանդէպ որդիական զգացումներին: Գոհունակութեամբ ենք հաստատում, որ Ձեր կեանքի յիշարժան այս հանգրուանը Դուք դիմաւորում էք ազգօգուտ ծառայութեան հարուստ վաստակով, ճանաչուած ու սիրուած հաւատաւոր մեր ժողովրդի կողմից: Ձեր հեղինակած գրքերն ու յոդուածները ընթերցողի սեղանին են արդեն տասնեակ տարիներ եւ ուրախալի է, որ Ձեր գրական եւ լրագրողական գործունէութեան 50-ամեայ յոբելեանին նուիրուած այս հանդիսութիւնը նշանաւորուած է նաեւ Ձեր նոր՝ «Մեր օրերուն հետ» մեծածաւալ գրքի շնորհանդէսով, որ Ձեր հերթական ընծան է ընթերցողներին:

Տարիներ շարունակ Դուք սիրով ու բարեխղճութեամբ վարում էք հայ կեանքում յայտնի «Նոր կեանք» շաբաթաթերթի խմբագրի պաշտօնը՝ Ձեր ջանքերն ու կարողութիւնները ներդնելով, որպէսզի պարբերականը մեր ժողովրդի զաւակներին հաղորդ դարձնի սփիւռքահայ համայնքներում, Մայր Հայրենիքում եւ մեր Սուրբ Եկեղեցու կեանքից ներս տեղի ունեցող կարեւոր իրադարձութիւններին: Վստահ ենք, որ «Նոր կեանք» շաբաթաթերթը, իր կոչմանը հաւատարիմ, շարունակելու է ծառայել հայ ինքնութեան ու նկարագրի պահպանմանը՝ հայորդեաց հոգիներում բորբոքելով սէրը ազգային մեր սրբազան արժէքների նկատմամբ:

Ի գնահատութիւն ազգային մեր կեանքում Ձեր երկարամեայ արդիւնաշատ գործունէութեան, սիրով ընդառաջում ենք բարեջան ձեր առաջնորդի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ՝ շարունակելու Ձեր ծառայութիւնը հաւատաւոր մեր ժողովրդին:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր Հայրական հովանու ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարանորոգ յաջողութիւններ պարգեւելով Ձեզ ստեղծագործական Ձեր գործունէութեան մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Յուլիսի
յամի Տեառն 2005 եւ ի թուին հայոց ՌՆԾԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 305